

փոխուի, լաւանայ: Կարելի է, որ ըստ երեսյթին ամենաանզգայ մարդն անգամ գեռ ևս ունի քիչ շատ ընդունակութիւն առաքիս նութեան, քրիստոնէութեան և իւր անձը փրկելու համար: Այդպիսաւոյն տուր, Տէր գորա համար ո՞ժ: Այդպիսի մարդոյն, ով Դու սղորմած երկնաւոր Թագաւոր, այդպիսի մոլորեալին դարձեալ առաջնորդիր գէպի իւր երջանկութիւնը, գէպի ճանոցումն իւր բարձր արժանաւորութեան: գէպի հաշտութիւն Քեզ հետ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի:

(Պատկեր.)

Գ. Ե. Ա.

ՀԱՅՈՍՏՈՆԵՍՑՅՈՒ Ա. Ա. Ա. Ֆ. Ե. Ա. Կ. Ա. Ա. Ս. ԵԿԵՂԵՑԻՈԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:

(ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՎԱԿ, 1886 թ. Դ.)

ԳԼ. ԺԱ.

Էջմիածնեցիք հրաւիրակների գրերով Յովսէփի մահը և այնուեղ պատահած անցքերը իմանալուց յետոյ, անմիջապէս 1801 Մարտ 16 - ին միաբանական ժողովով նորից լնտրեցին Դանիէլին, և Դաւիթ Էնէգեթեցու առաջարկութեան համեմատ Նրեանայ հայ մեծամեծների հաւանութիւնը և Նրեանայ խանի հաճութիւնը առնելուց յետոյ Մարտի 20 - ին Պառաւեան Յովհաննէս եպիսկոպոսին և Դանիէլի ջերմ կուսակից Աշտարակցի Ներսէս վարդապետին հրաւիրակ ուղարկեցին: Հրաւիրակները Եւդոկիա գեռ չեն հասել Թիֆլովի մեծամեծները Յովսէփի ձեռնասուն Գրիգոր վարդապետի զրդմամբ ինդրեցին Նրեանայ խանին որ Դաւիթին կամուզիկոսացնէ, իսկ ինքն Դաւիթ իւր եղբօր աներ Աքրահամ Աղամալեանի միջոցաւ արգէն զրաւել էր Նրեանայ մեծամեծներին:

Էջմիածնի վանականները տեսնելով Դաւիթի ձգումն, իջման տաճարում ուխաեցին բացի Դանիէլից ուրիշ ոչ ոքի ըլճանաչել կամուզիկոս: և այս որոշումը յայսնելով Նրեանայ խանին՝ նորա հաճութեամբ Դանիէլի գալուստը շտապիցնելու համար նոր հրաւիրակներ ևս ուղարկեցին: Խնդն Դաւիթ եպիսկոպոս ևս հրաւիրակների ձեռքով մի թուղթ ուղարկեց Դանիէլին խնդրելով շտապել գալ Էջմիածնի: Նոր հրաւիրակները հասանելով Կարին և տեսնելով որ Դանիէլ Կարին դեռ չէ հաօել, ճեպընթաց թղթաւա-

տարի միջոցաւ յայտնեցին նորան էջմիածնի դրութիւնը և խնդրեցին առանց յապազելու շտապել գէպի էջմիածնի:

Դանիէլ Եւդոկիայում Ասքրելի 7 - ին հանդիսաւոր կերպով հրաւերքը ընդունելով՝ 11 - ին գէպի էջմիածնի էր ուղեւորուել, և Արտպերգոց հիւրասիրութիւնը վայելլիս, Իրբ Ասքրելի 28 - ին երկրորդ հրաւիրաբանների գրութիւնն էր ստանում՝ վութաջանն Դաւիթ հենց նոյն օրը Ս. Էջմիածնում կաթուղիկոսական օծումն էր ընդունում:

Դանիէլ Մայիսի 14 - ին հասանելով Բայազէտ և լսելով Դաւիթի օծման համբաւը, իւր ձեռնասուն Մանուէլ Շարդապետին ուղարկեց Կ. Պոլիս տեղոյն ազգայնոցը գործի եղելութիւնը յայտնելու համար. շուտով Կ. Պոլիս ուղարկեց նաև Աշտարակյի Ներսէս վարդապետին: Դանիէլի պատուիրակները ոչինչ չը կարողացան անել, որովհետեւ Դաւիթ ևս մարդ ուղարկած լինելով Պոլիս՝ իւր համախոհ Զամաշրջեան Յովհաննէս պատրիարքի միջոցաւ ստացաւ իւր կաթուղիկոսական հրովարտակը:

Մանուէլ և Ներսէս վարդապետները ամեն ջանք գործ գնելով Յովհաննէս պատրիարքին պաշտօնանկ արին և նորա տեղ իրանց վարժապետ Խամսեցի Դրիգոր Նովիկոսոսին պատրիարք հաստատել տալով, նորա ձեռքով էլ շուտով ստացան Դանիէլի կաթուղիկոսութեան հրովարտակը: Դանիէլ որ Դաւիթի երկիւղից խոյս էր տուել կարին, այդտեղ ստացաւ Ներսէս վարդապետի ձեռքով իւր համատաւթեան հրովարտակը և վերադառնալով Բագրեանոցի Ս. Յավհաննու (Ուչքիւիսէ կոչուած) վանքը, էջմիածնեցւոց, տաճկուատանեաց և ռուտաստանեաց հաճութեամբ ու հաւանութեամբ 1802 Մայիսի 25 - ին Աղիմարայ կաթուղիկոսի, 15 եղիկոսապաների, 18 վարդապետների և բաղմանիւ քահանան ոի ու ժողովրդեան ներկայութեամբ ժողով կազմելով՝ Դաւիթ ինքնակոչ կաթուղիկոսին և նորայոց նզավելուց յետոյ կաթուղիկոսական օծումն ընդունեց. Միւռօն օրչնեց և ըրջաբերական կոնդակներով իւր օծումը յայտնելով, օրհնած միւռօնն էլ բաժանեց եկեղեցիներին, որոնք սկսեցին Դանիէլի անունը յիշատակել: Դաւիթ նոյնպէս նզովեց Դանիէլին ու նորա կուսակիցներին և իւր մարդկանց ձեռքով 1802 Հոկտեմբ. 11 - ին Խամսեցի Դրիգոր պատրիարքին Քաղըեղոն աքսորել տալով, վերապէս իւր համախոհ Յովհաննէս եպիսկոպոսին պատրիարք հաստատել տուեց, որ անմի-

ջապես հրամայեց Դաւթի անունը՝ յիշտտակել եկեղեցիներում։ Դաւիթ այնուհետև բոլորովին վտահ՝ սկսեց տանջել Դանիէլի կուսակից Էջմիածնեցւոց։ որոնցից Յովհաննէս գեղարդակիրն ազատուելու առիթ գտնելով փախել էր Յիֆլիզ և Ռուսաստանեաց տռաջնորդ Եփրեմ եպիսկոպոսի հետ աշխատելով։ Լազարեանց միջնորդութեամբ յաջողել էր 1802 Մայիսի 19-ին ստանալ Ռուսաց արքունիքից Դանիէլի կաթուղիկոսութեան համար հրովարտակ։ Ռուսաց արքունիքը յանուն իւր և Պետերբուրգի մետրոպոլիտի ուղղեալ Դաւթի բոնութեանց նշանակ Էջմիածնեցւոց քարոզին անսալով՝ առաջարկեց Երեանայ խանին պաշտպանել Էջմիածնի միաբանութեանը և Դանիէլ կաթուղիկոսին։ ստկայն մինչեւ Դանիէլ և Էջմիածնեցիք այս պաշտպանութիւնը կը վայելէին, Դաւիթ իւր կուսակից կա Պօլսոյ Ռուսաց գեսպան Թամարային նորա թարգման Գրիգոր Աղոյեկեանի և Յովհաննէս պատրիարքի միջոցաւ Դանիէլին և նորա կուսակիցներին սուլթանի հրավարտակով Էջմիածնի բերելով՝ 32 օր չարաչար տանջանքով բանաւարկեց։

Վրաստանի կուսակալ իշխան Պաւէլ Յիցիանով Ռուսաց արքունեաց բարեհաճ կամքը և մտադիւր պաշտպանութիւնը դէպի Դանիէլ և Էջմիածնեցիք ի գլուխ հանելու համար գեսպաններ ուղարկեց Երեանայ խանին։ սակայն այս գեսպանութիւնը ոչինչ արդիւնք չունեցաւ, որովհետև խանը Ռուսաց ցանկութիւնը կատարելու համար առաջարկեց նոցա՝ որ նոքա ևս Ախալցխոյի փախառական և իրան ապաւինած Նէրիք փաշային՝ նորա նախկին աեղք վերահսատատելու համար հոգան։ Խանի ստիպմամբ Դանիէլ ևս պարտաւորուեց իրեւ Ռուսաց բարեկամ այս մասին միջնորդութեան թուղթ գրել Յիցիանովին։ Դանիէլի այս միջնորդութեան թուղթը Խամսեցի Գրիգոր եպիսկոպոս և Ներսէս վարդապետ Յիֆլիզ հասյնելով՝ փոխանակ իրանց յանձն եղած գործի համար հոգալու՝ Յիֆլիզի առաջնորդ Յովհաննէս գեղարդակրի ձեռքով մի խնդիր ներկայացրին Յիցիանովին նկարագրելով Հայերի թշուաւութիւնները, Էջմիածնի և Էջմիածնեցւոց խեղճութիւնը և Դանիէլ կաթուղիկոսի ու նորայոց կրած անտանելի տառապանքը։

Յիցիանով Դանիէլին հայրապետական Սթոռը բարձրացնելու համար երկրորդ անգամ գեսպաններ ուղարկեց, որ ոչինչ ար-

դիմք չունեցաւ, որովհետեւ Երեանոյ խանը տեսնելով որ եկածները պաշտօնազուրկ փաշայի համար ոչինչ յոյս չեն տալիս՝ բացէ իրայ մերժեց նոցա առաջարկութիւնը:

Ցիցիանովիւր դէպի Արարատեան գաւառները արշաւ անքին Դանիէլին զինու զօրութեամբ հայրապետական Աթոռի վերայ բարձրացնելու կերպարանք տալով արշաւեց Դանձակի վերայ այն մոտ գրութեամբ՝ որ Նամշաղնից անցնի դէպի Երեան. զօրքի մէջն էին Գեղարդակիրն ու Ներսէս վարդապետը։ Մինչ Ռուսները պատերազմի պատրաստութեամբ էին զբաղուած։ Դաւիթը 1803 Մայիս 25ին Հոգեգալստեան կիւրակէ օրը Դանիէլի մօրուքը ածելել տուեց ասելով. «Դէռուսներին կանչի, որ գան քեզ օգնեն»*)։ Այս դէպքը այնպիսի ծանր տպաւորութիւն ունեցաւ թէ Դաւթեանց և թէ Դանիէլիանց վերայ, որ Դաւիթը յայտնի տեսնելով միարանութեան ընդհանուր տհաճութիւնն ու անբուտականութիւնը, սովիալուեց էալուխտ էլ տալու մտադրութիւնից յետ կենալ։ Այս դէպքը առհասորակ շատ վատ տպաւորութիւն գործեց ամենի վերայ և Դաւիթ ունեցած համարումն էլ կորցրեց։ Ներսէսը, Խամսեցին և Գեղարդակիրը աշխարհի ամենայն կողմերը նամակներ ուղարկելով, էջմիածնում ամենահասարակ դէպքիրն անգամ խոշորացնելով յայտնումէին, և ոչ մի առիթ չէին բայ թողնում Ցիցիանովի ուշադրութիւնը հայերի և Ս. էջմիածնի վերայ դարձնելու։ Հայերի և էջմիածնի անտանելի գրութիւնը ցոյց տալու համար Բայազէտից ստացած նամակի պատճէնը ներկայացրին Ցիցիանովին՝ որով յայտնվումէր թէ, Բայազէտում եղած էջմիածնական գոյքերին վտանգ է սպառնում։ Իսկ այս գոյքերը Աղտ - Մահմատ խանի ժամանակ Ղուկաս կաթուղիկոսն էր ուղարկն Բայազէտ։

Ցիցիանով 1803 Դեկտեմբերի վերջին օրերում Դանձակն առնելուց և տեղւոյն թշուառ հայերին Գեղարդակիրը Ցովհաննէս եպիսկոպոսի և Աշտարակցի Ներսէս վարդապետի խնամարկութեանը յանձնելուց յետոյ, վերադարձաւ Կովկասեան ցեղերի խլրումները զսպելու և պատրաստուելու Պարսից դէմ։ Պարսից Ֆաթալի շահը Երեանը Ռուսաց յարձակման դէմ պաշտպանելու համար՝ իւր թագաժառանգ Արքա - Միրզա որդու զօ-

(*) Նիւթեր Ներսէս և ի կենսագրութեան Բ. եր. 31.

բավարութեամբ 20 հազար զօրք կենդրօնացրեց Էջմիածնում։ Ցիցիանով 1804 Յունիս 19 - ին ժամանելով Էջմիածին և 20 - ին ճակատելով Պարսից այս բանակի դէմ՝ յաղթանակեց և դիմեց Երեանայ վերայ Քանաքեռի մօտ բանակելով։ Երբ Պարսից զօրքն ևս թողեց Էջմիածինը և շտապեց կենդրօնանալ Երեանայ մէջ, Էջմիածնեցիք իսկոյն իմաց տուին Ցիցիանովին, և Ռուսաց մի գունդ զօրք առանց վնասի մտաւ Էջմիածին։

1804 Յունիսի 30 ին սկսուեց Երեանայ պաշարումն։ Խանը Դանիէլի միջոցաւ զինադադար էր խնդրում, իսկ Ցիցիանով պահանջումէր կաթուղիկոսական խռովութիւնները վերջացնելու համար Դանիէլին հաստատել կաթուղիկոսական աթոռի վերայ, իսկ Դաւթին յանձնել իրան, յանուն կայսեր խոստանալով Ռուսաստանում աղահով պահել նորան պատշաճաւոր ռոճկով։ Բանակցութիւնը և պաշարումը տևեց մինչև Սեպտեմբեր։ այդ ժամանակ արդէն սպառած լինելով Ռուսաց բանակի պաշարը և Էջմիածնից ձրիարար տարած մօտ 150 չետվերտի քանակութեամբ ցորենը, Ցիցիանով պաշարումը վերցրեց և մեծամեծ կորուստներ կրելով յետ դարձաւ Ս. Էջմիածին։ Ցիցիանով Էջմիածնի գոյքերը պարսիկների կամայականութեան զոհ չը թողնելու համար 11 հակերի մէջ զետեղեց և Գեղարդակրի ու իւր կնքով կնքելով՝ ուղարկեց Թիֆլիզ։ Ցիցիանովին հետեւեցին Էջմիածնում մնացած Դանիէլի կուսակիցներից շատերը։

Ցիցիանովից յետոյ 1805 Մայիսի 5 - ին գեներալ Նեսվիտայելիք մի գնդով Գեղարդակրի հետ Էջմիածին եկաւ և Էջմիածնական մնացեալ գոյքերն էլ առանց հաշուի Դաւթի գոյքերի հետ տարաւ Թիֆլիզ։ Էջմիածնեցիք առհասարակ զոհ չէին որ Էջմիածնի իրեղէնները դուրս տարուեցին և Դաւթի մինչեւ անգամ բողոքեց թագաւոր կայսեր։ Էջմիածնեցիք իրաւունք ունէին զոհ չը լինելու, որովհետեւ տարուած իրեղէններից շատ սակաւ մասը յետոյ Էջմիածին դարձաւ։

Ռուսաց այս արշաւանքներից յետոյ երբ Ֆաթալի - Շահը եկաւ Ս. Էջմիածին, Դաւթիթը Դանիէլին Ռուսաց լրտես ներկայացնելով՝ հաւատացրեց Շահին որ Ռուսների արշաւանքը հենց Դանիէլի պատճառով է, իսկ Շահը տեսնելով Դանիէլի իւղան կերպարանքը և ածելուելուց յետոյ հազիւ մասնաչափ երկարած մօրուքը, զարմացաւ, որ Ռուսները այնպիսի գծուծ մարդուն նշանակութիւն

են տալիս. նա Դանիէլին յանձնելով Մարտղացի խանին, ասոց. «Քեզ է յանձնվում այդ կապեալը, քեզոնից էլ կը պահանջուի», և շատ հաւանելով Դաւթի փայելուց և փառացի դէմքին ու կերպարանքին, նորան հաստատեց կաթուղիկոս։

Մարտղայի խանը սկզբում խսութեամբ էր վարվում Դանիէլի հետ, բայց երբ որ համոզուեց թէ կապեալը մի աղօթասէր, ճինացեաց և երկիւղած մարդ է, բանտից հանեց և իւր տանը արձակ պահում էր, իսկ երբ միանգամ Դանիէլ խանի հիւանդ որդու միերայ աղօթելուց յիտոյ, հիւանդը տռողջացաւ, սկսեց խանը աւելի ևս քաղցրութեամբ վարուել նորա հետ։

Դանիէլ՝ միանգամ Մարտղայից 1805 Սեպտեմբերի 13-ին թուղթ գրեց Էջմիածնից տարագիր խր կուսակից միաբաններին, որով յորդորումէր բարեկարգութեան համար եպիսկոպոսների մի ժողով կազմել այնպիսի իրաւունքով, որ ոչ կաթուղիկոսը առանց եպիսկոպոսների խորհրդի և ոչ եղիսկոպոսների խորհուրդը առանց կաթուղիկոսի հաճութեան եղական կամքով կարտղանան անօրինել եկեղեցական, Ա. Աթոռին և հասարակութեան վերաբերեալ գործերից ֆողովը կազմակերպելու համար իւր կողմից առաջարկումէր Ռուսաստանի Եփրեմ, երբեմն Կ. Պօլոսյ պատրիարք Խամւեցի Գրիգոր և Բարսեղ ու Գեղարդակիր Յովհաննէս արքեպիսկոպոսներին, խորհուրդ տալով որ գոքա միասին հաւաքուեն և արժանաւոր անձինքներից Վիւնհոգոս կակմելով անօրինեն ամեն բան և մինչեւ անգամ կաթուղիկոսի գէմ վճիռ կոյոցնեն ի հարկուոր գէպս *). և այս մասին առանձնապէս գրումէ թէ Եփրեմ եպիսկոպոսին և թէ Պետերբուրգում կաթուղիկուական հաւատարմատար (վէքիլ) Լազարեան Սինաս Աղային։

Մարտղայի խանը, երբ պաշտօնով Երեան եկաւ, խռովութիւնը դադարացնելու համար հրատարակեց թէ Դանիէլը մեռել է, և արդարե այս լուրը բաւական հանգստացրեց յուղեալ մոքերը։ Սակայն ինքն խանը, Երեանու օդը ըլտանելուն համար գարձեալ Մարտղայ փոխադրուելիս, ճանապարհին հանդիպելով իրան յաջորդ նշանակուած Հիւսէին - խան սարդար (գլխաւոր, մարզպան) և Հասան - խան Վաջար եղբարց, խորհուրդ տուեց նոցա, որ Դանիէլին հաստատել տան կաթուղիկոս, և այսպէս էլ

(*) Պատմ. Վեցեց. Եջմ. եր. 63-64.

եղաւ : Հիւսէին Խան - Ասրդարի մէջնորդութեամբ Դանիէլի ազա-
տութեան և կաթուղիկոսութեան հրովարտակը Մարաղայու խա-
նը ստանալով Շահից մեծ պատուով ճանապարհ գրեց Դանիէլին
գէոլի Երեան և Եջմիածին : Դանիէլ 1807 թուի Մայիսի 14 - ին
500 զինուորների ուղեկցութեամբ շքեղ հանդիսով մտաւ Երեան
և ուղակի ըերգը՝ Խանի ապարանքը գնաց :

Դաւիթը որ Երեանայ Անտառապի կաթուղիկոսական ապարան-
քումն էր, հրաւիրուեց խանից և կաթուղիկոսական հանգերձան-
քով գնայնորա մօտ, բայց երբ կաթուղիկոսին յատկացեալ բարձի
վերայ Դանիէլին տեսաւ՝ վշացած վերադարձաւ ասելով. «այստեղ
ինձ տեղ չըկայ, որովհետեւ բարձը (տեղը) որ իմն էր, ուրիշն է
ըստեւ» : Խանը հիսնալով հանգերձ Դաւիթի այս վեհանձն վար-
մանց վերայ, կաթուղիկոսական հանգերձանը իւղեց նորանից և
յանձնեց Դանիէլին իբրև կաթուղիկոսի : Խանի մօտից երբ Անտ-
պոտիապարանը վերադարձան՝ Դաւիթը Դանիէլին ներկայացրեց
կաթուղիկոսանի բանալին՝ ասելով. — «Առ, կաթուղիկոս եղ-
բայր, եթէ ես սօրունից մի բան շահուեցի, դու էլ կը շահուեա»,*):
Նոյն Մայութի 20-ին Դանիէլն էլ Դաւիթն էլ վերադարձան
Ս. Էջմիածնին. էջմիածնեցիք մինչեւ Ս. Հռիփոսիմէի վանը ընդառաջ
գուրս եկո՞ն և անահման ուրախութեամբ շնորհաւորեցին Դա-
նիէլի գալուստը և երբ Դանիէլի աջը համբուրելուց յետոյ ակնա-
ծութեամբ մօտեցան Դաւիթի աջն ևս համբուրելու՝ մերժեց նա-
այտելով. «այսուհետեւ գնացէք, զնացէք. ձեր սրտովը եղաւ» :

Գանիէլ կաթուղիսական Աթոռի վերայ հաստատուելուց յետոյ շուտով Վրաստանում գտնուած էջմիածնի վանականներին զրեց որ վերադառնան էջմիածնին, մի և նոյն ժամանակ յայտնեց որ, որոնք չեն վերտպառնալ, զրկուած պէտք է համարուեն վանականութեան իրաւունքից: Յիշլիզի առաջնորդ Գեղարդակիր Յոհաննէս արքեպիսկոպոսին, որ կոթուղիկոսի տեղակալի տիտղոս էր կրում և բաւական յանդգնութիւն էր ստացել, Հատիաղոր յատկացրեց Ռուսաստանի Եփրեմ Արքեպիսկոպոսին, ինկը Յիշլիզի առաջնորդութիւնը յանձնեց էջմիածնին և տեղակալի զարեան Ախուառ Աղոյի խորհրդով կահչեց էջմիածնին և տեղակալի տիտղոսը յատկացրեց Ռուսաստանի Եփրեմ Արքեպիսկոպոսին, պիտի Յիշլիզի առաջնորդութիւնը յանձնեց Խամսեցի Գրիգոր Եփրեմ Աղոյի կահչեց էջմիածնին և տեղակալի պիտի պատրիարք Պանիէլի կուսակիցները շուտով հաւաքուեցին Ա.

(*) Պատմ. Կաթեկ. Եղմ. գործ Մ. Մ. Մանուկյանց. եւ 71.

Էջմիածին, 1808 Մարտի 8 - ին հասաւ նաև Ներսէս վարդապետը, և շուտով եպիսկոպոսացաւ:

Ներսէսի գրդմամբ Դանիէլ շուտով իրագործեց այն խորհուրդը, որ Մարաղայից առաջարկել էր Սիւնհողոս կամ եղիսկողոսների խորհուրդ կտղմելու աղաքաւ, ուստի և հաստատեց այդ ժողովը՝ Ա. Ժողովի խորհրդարանը կամ Սիւնհողոսը հանդիսաւոր կերպով բացեց 1808 թուի Յունիսի 23 - ին նախապէս և ինքն երդուելով հպատակել։ Սիւնհողոսի անդամների թիւը ինն էր, որոց եօթն եպիսկոպոս էին խոկ երկուոր վարդապետ։ Սիւնհողոսի հաստատութեան և Ռուսաստանի Հայոց կոնսիստորի՝ այդ խորհրդարանին ենթարկուելու համար Դանիէլը 1808 Օգոստոս 11 - ին դիմելով Ռուսաց արքունիքին՝ ստացաւ բարձրագոյն հաճութիւն։ Տաճկաստանցիք բոլորովին չընդունեցին Սիւնհողոսի իրաւասութիւնը, որ գոյութիւն ունէր ըստ ձեին, որովհետեւ Ներսէսը օգուտ քաղելով Դանիէլի յողդողդ բնաւորութիւնից, թուլութիւնից և գէպի ինքն ունեցած անսահման հաւատարմութիւնից՝ սկսել էր յանուն Սիւնհողոսին՝ ճնշում գործել բոլորի վերայ ես, և այս խոկ պատճառով համարեա մեծագոյն մասը թէ միաբանութեան և թէ խորհրդարանի անդամների դժգոհ էին։

Դանիէլը երկար ժամանակ չըվարեց կաթուղիկոսական իշխանութիւնը, շուտով հիւանդացաւ, և այս պատճառով էլ մի ցաւալի գէպք պատահեց Ա. Էջմիածնում։ Հիւանդ կաթուղիկոսին դարձանելու համար շատ կոսկիտ կերպով գահընկէց Դաւթից պահանջեցին բժշկաբանը։ Նա զայրանալով պահանջողի անտաշ վարմունքի համար մի քանի անտեղի խօսքերով զլացաւ կատարել պահանջը։ Ներսէս եպիսկոպոսը, որ առիթ էր վնատում Դաւթից վրէժինողիր լինելու, գրգռեց միւս միաբաններին էլ, և գանակոծել տալով Դաւթին, Վեհարանի գաւթում մօխուքը ածիլեց ու բաւական տանջելուց յետոյ բանտարկեց։ Երեանայ խանը երբ լսեց այս կամեցաւ յանցաւորներին պատժել, բոյց Ներսէսի և այլոց խնդրանքով, Դանիէլ պատասխանեց թէ ինքն է այնպէս հրամայել։ Դաւթիթ խանի հրամանաւ բանտից ազտուեց և Էջմիածնից սահմանեալ քանակութեամբ առըռւստի նիւթեր ու դրամ ստանալու պայմանաւ հեռացաւ Էջմիածնից և Երեանում՝ իւր եղբօր տանն էր բնակվում։

1808 թուի նույս — Պարսկական պատերազմի ժամանակ Երեւանայ խանը Դաւթին և Դանիէլին պահեց Երևանայ բերդում՝ ուր և Դանիէլը վախճանուեց նոյն թուի Հոկտեմբերի 9ին և Էջմիածին ըերուելով՝ թաղուեց զանգակատան հարաւային կողմը *) :

Երբ Էջմիածնի հայրապետական Աթոռը Դանիէլի և Դաւթի փառասիրական ջանքերին նշաւակ՝ ներքին խռովութեամբ յուղվումէր և յուղում ազգին, տաճկահայք ևս նոյն թշուառ գրաւթեան էին ենթարկուած. որովհետեւ Զաքարիա պատրիարքի օրովկ. Պօլսում օծուած Սոի կաթուղիկոս Թորոսին 1801 թուին Խօզան օղի կոչուած Կիլիկիայի այլազգի իշխանը սրախողիսող սպանեց և անդամ անդամ յօշոտելով Սոի պարսպից գուրս, գետի կամրջի վերայ նետեց. Թորոսին յաջորդեց նորա եղբօր որդի Կիրակոս առաքինի և որբակրօն, քսան և չորս ամեայ արքեպիսկոպոսը, որ կաթուղիկոսանալուց յետոյ 1802 թուին Երուսաղէմայ Հայոց պատրիարք Թէոդորոս Վ. ի օրով գնաց Երուսաղէմ ուխտ, կաթուղիկոսավայել ընդունելութիւն գտաւ և վերագառնալով իւր աթոռը՝ սկսեց կառավարել իւր կաթուղիկոսական թեմը մխիթարելով իւր խնամոց յանձնուած ժողովրդին այնքան, որքան կարող էր մի հոգեւոր անզօր հովիւ աշխատել իւր ժողովրդի անդորրութեան և հանգստութեան համար: Ժողովուրդը ամենայն տեղ ցաւալի վիճակի մէջ էր. բացի Ենիշէրի կոչուած անկանոն զօրքերի ասպատակութիւններից և բռնի յափշտակութիւններից՝ Տաճկաց արքունիքը 1807ին (Երեւդաշնակից Նապօլէոն Ա. ի՝ հակառակորդ տէրութեանց գէմ) Կ. Պօլիսը ամրացնումէր իւր հողատակներին, ընդորս և հայերին Յովհաննէս պատրիարքի հետ ձրի իբրև մշակ աշխատացնելով:

1808 թուին այրուեցին Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարը և եկեղեցական սուրբ սպասներն ու կգեսաները: Յոյները Ս. Յարութեան տաճարը 1810 թուին մենակ վիրանորոգելով՝ կամենումէին իւրացնել, բայց Կ. Պօլսոյ Յովհաննէս պատրիարքը Հայոց և կաթողիկ Հայոց հետ աշխատելով՝ առաջքը տռաւ Յունաց ոյդ դիտման, և Երուսաղէմում գտնուած սրբութեանց վերայ Հայոյ ունեցած իրաւունքները 1812 թուին նոր հրավարակներով հաս-

(*) Ս. Վ. Մուրատեան Դանիէլի մահը սխալմամբ 1810 թուին է գնում: (Պատմ. Հայաստ. Եկեղ. Եր. 594:)

տատեց Առլի կոչուած Սուլթան Մահմուտի ձեռքով։

Հռովմէական հայերի մասնակցութիւնը Երուսաղէմի խնդրին՝ 1810 թուին պատճառ գարձաւ նոցա՝ ազգի ամբողջութեան հետ միանալու ցանկութեանը՝ որի համար առաջարկեցին սոյն հինգ պայմանները,

Ա. Որ հայերը Յիսուսի Քրիստոսի մէջ երկու բնութիւն և երկու ներգործութիւն ընդունեն։

Բ. Որ հայերը խոստովանեն թէ Սուրբ Հոգին Հօրից և Որդուց է։

Գ. Որ հայերը ընդունեն թէ սուրբերի հոգիները այժմ փառաւորուած են, իսկ մեղաւորներինը՝ դատապարտուած։

Դ. Որ հայերն ընդունեն Պետրոսին՝ գլուխ առաքելոց, իսկ նորա յաջորդներին՝ գլուխ այլ եկեղեցեաց հովուապետների, և

Ե. Որ հայերը ընդունեն վերջին օծումը Ս. Եկեղեցու խորհուրդ՝ հաստատուած Յակովը առաքեալից։

Առաջարկութեան այս հինգ կէտերը քննելու համար Յովհաննէս պատրիարքի նախագահութեամբ հինգ անգամ ժողով կայացաւ Կ. Պօլսոյ Ս. Առառածածնի մայր Եկեղեցում։ Ժողովներին ներկայ էին լինում հոգևորականներից էջմիածնի նուիրակ Քեօլեան Աբրահամ, Զմիւռնիայի Մարտիրոս, Քրուսայի Պօղոս և Եւդոկիայի Երեմիա արքեպիսկոպոսները, Ս. Երուսաղէմայ Վէքիլ Պօղոս վարդապետը և Մշու Ս. Կարապետի Վէքիլ Վարդան Եպիսկոպոսը, աշխարհականներից՝ արքունի վաւոդապետ Մահտեսի Առաքելը, Զարագեան և Սահսայեան Գրիգորները. Համբաւաւոր վարժապետներից Տէր Մեսրոպ քահանան, Գրիգոր Փեշտմալճեան և այլք աւելի քան քսան անձինք։

Ժողովը յիշեալ հինգ կէտերի վերաբերութեամբ պատասխանեց.

Ա. Խոստովանել Քրիստոսի մէջ մի բնութիւն՝ ընդդէմ նեստորի՝ որ Քրիստոսին երկու էր բաժանում, և խոստովանել Քրիստոսի մէջ աստուածային և մարդկային բնութեանց անբաժանելի միաւորութիւն ընդդէմ Եւակեչու։

Բ. Հայր՝ ինքնին, Որդին՝ Հօրից և Սուրբ Հոգին՝ նոցա էութիւնից։

Գ. Սուրբերը փառքի մէջ են՝ յուսով, իսկ անզեղջ մեղաւորները՝ դատապարտութեան պաաժի մէջ են յուսահատութեամբ։

Դ. Բոլոր առաքեալները ունին բացարձակ իշխանութիւն նոյնպէս և նոցա յաջորդները իրանց յատուկ ազգի վերայ, հետեւաբար Պետրոսը՝ առաքեալների, և Հռովմայ պապը՝ միւս հայրա-

սկետների մէջ յունէր և յունի ոչինչ գերիշխանութիւն։

Ե. Հայոց եկեղեցին վերջին օծումը ընդունումէ եկեղեցու խորհուրդ, և այս խորհուրդը փոխանակ իւղոյ օծմամբ կատարելու քահանայի աղօթքով է կատարում *)։

Մինչ Հայ պատրիարքարանը այս բացատրութիւններն եր խըմ-
սագրում՝ կաթոլիկ Հայք ժողով կազմելով որոշեցին առաջարկել
պատրիարքարանին, որ եկեղեցում չը յիշատակուեն Յովհան
Որոտնեցու և Գրիգոր ու Մովսէս տաթևացինների անունները,
քնզովուեն Նւոն և Քաղկեդոնի ժողովը, և եկեղեցական մա-
տեաններից եղծուեն այս մասին եղած նզովները։

Յովհաննէս պատրիարք այս խնդիրներն ևս քննելու համար ժո-
ղով կազմեց, բայց տեսնելով որ հետևանքը շատ ծանր և տղմկա-
լից ընդիմութիւն լինելու է, ձեռք վեր առաւ միութեան խնդրից։

ՖԼ. ՓԲ.

Դանիէլ նախ քանիւր վախճանը խնդրել էր Ռուսաց արքունեաց՝
Ռուսատանեայց առաջնորդ և կաթուղիկոսական տեղակալ Եփ-
րեմ արքեպիսկոպոսին Եջմիածին բերելու համար, որպէս զի Դա-
ւիթը նորից կաթուղիկոսութեան յը ձգոի. բայց դեռ պատաս-
խան յրտացած՝ վախճանուեց, և Եփրեմը Եջմիածնի միաբանական
ժողովով ընտրուեց կաթուղիկոս Եփրեմի կաթուղիկոսական ար-
տօնագիրը ստանալու համար Աշտարակցի Ներսէս Եպիսկոպոսը
(կաթուղիկոս) գնաց Արքաս - Միրզայի մօտ՝ որ Խոր - Վիրապայ
դաշտումն էր բանակած։

Արքաս - Միրզան գիտենսով որ Եփրեմ ռուսասէր է, գործը
յետաձգել կամենալով՝ առաջարկեց հետևել իրան և Դավրիժում
ստանալ արտօնագիրը։ Դավրիժում Արքաս - Միրզան կամեցաւ
Ա. Քաղէոս առաքելոյ վանահօրը կաթուղիկոսացնել, բայց Երբ
նա հրաժարուեց, կամայ ակամայ ստորագրեց Եփրեմի կաթուղի-
կոսութեան արտօնագիրը։ Եփրեմ Աժդէրիանում այս արտօնա-
գիրը ստանալուց յետոյ գնաց Գետերբուրգ և կայսեր բարեհա-
ճութեան հետ վեղարի խաչ ևս ստանալով՝ վերադարձաւ Եջմիա-
ծին և 1810 նոյեմբեր 8-ին օծուեց։

(*) Պատմ. Հայոց Ա. Պէրպէրեան գլ. ՓԴ

Մինչև որ Եփրեմ կը լուրսւէր և Էջմիածին կը հասնէր, Դաւիթը Երևանայ խաների և պարսիկ մեծամեծների ձեռքով բաւական նեղութիւն տուեց Էջմիածնեցւոց, մանաւանդ Ներսէսին, ներկայացնելով նորան Արքաս - Միրզայի մօտ որպէս ռուսաց լրտես- բայց Ներսէսը արդարացաւ նոյն ինքն Դաւիթին լրտես ցոյց տա- լով և ներկայացնելով այն թուղթը՝ որ Դաւիթ 1804 - ին գրել էր Յիշիանովին՝ խնդրելով նորա պաշտպանութիւնը Պարսից դէմ:

Եփրեմ համնելով Էջմիածին, դադարեցրեց Դաւիթեանց և Դա- նիէլեանց վէճերը իւր քաղցր բնաւորութեամբ շահելով բոլորին և նոյն ինքն Դաւիթին՝ որ զզուած այնքան աղմուկներից առանձ- նութեան մէջ 1817 նոյեմբերի 1 - ին վախճանուեց և թաղուեց սուրբ Գայիանէի գաւթում:

Տաճկաստանեայք նկատելով որ Եփրեմ առանց իրանց գրաւոր հաւանութեան է կաթուղիկոսացել, թէև փոյթ չունեցան հաս- ասաութեան յատկացեալ Հրովարտակը ստանալու, բայց նոր խռովութեանց ևս տեղի ըստալու համար յիշատակեցին նորա անունը եկեղեցիներում: Եփրեմը 1813 - ին Կ. Պօլսոյ պատրիար- քարանին վեց յօդուածով մի առաջարկութիւնը գրեց, որով առա- ջարկումէր Ա. Որ Կ. Պօլսոյ ամիրայից ժողովի կողմից մի հոգեորա- կան կամաշխարհական անձն գտնուի Էջմիածնի Սիւնհոդոսի մէջ: Բ. Որ Տաճկահայք, աշխարհականք և հոգեորականք Սիւնհոդո- սի հաստատութեան համար գրաւոր համաձայնութիւն տան և այս համաձայնութիւնը տպագրուի՝ անյեղլի մնալու համար: Գ. Որ կաթուղիկոսի հաստատութեան Պարսից տուած Հրովարտակին համեմատ Սուլթանի հրովարտակի մէջ ևս Սիւնհոդոսը կաթուղի- կոսին գործակից շարակարգուի: Դ. Որ իւրաքանչիւր վանքի կրօ- նաւորների թիւը սահմանափակուի և վանականաց հագուստ և ուտեստ սահմանուելով՝ արգելուի մասնաւոր ժողովարարու- թիւնը: Կաթուղիկոսի, Սիւնհոդոսի, և Կ. Պօլսոյ պատրիարքա- րանի հաճութեամբ հայրապետական կոնդակով նուիրակները շրջեն ուր հարկն է: իսկ նուէրը բաշխուի վանորէից՝ Կ. Պօլսում կայացած ժողովի միջոցաւ: Ե. Որ տղգի մէջ եպիսկոպոսարաններ սահմանուեն որպան հարկաւորն է: Զ. շրջաբերականով ազդուի, որ առանց հայրապետական կոնդակի, շատաշրջիկ եպիսկոպոսնե- րը, վարդապետները և քահանայքը չընդունուին:

Այս առաջարկը ընդունուեց, և Կ. Պօլսոյ պատրիարք Դաւիթի

կուսակից Արքահամեպիսկոպոս Քեօլեան, որ 1813 Մայիս 15 - ին՝
յաջորդիլ էր Յովհաննէս Զամաշրջեանին, 1814 Մայիս 3 - ին
գրութեամբ յայտնեց Եփրեմ կաթուղիկոսին որ Սիւնհողոսը կա-
թուղիկոսին գործակից պէտք չէ ճանաչել, և սորանով սահմանա-
փակել ազգընտիր ընդհանրական Հայրապետի իրաւունքը *):

Եփրեմ կաթուղիկոս նուիրակների հրահանգութեան և նոյա-
պարտքն ու իրաւունքը որոշելու համար ևս մի կանոնադրութիւն
հրատարակեց, որով նուիրակներին արգելումէր ինքնազլուխ,
առանց տեղական առաջնորդների հաճութեան վարչական գոր-
ծերին խառնուել. և պատուիրումէր թէ Երուսաղէմայ նուիրակ-
ների և թէ ժողովրդեան հետ սիրով վարուել. բռնի ոչ ոքից ոչինչ
չը սկահանջել. գտնել գրչագիր գրքեր և ուղարկել Էջմիածին **):

Որովհետև Աղուանից երկիրը Ռուսաց իշխանութեան տակ լնի-
նելուց յետոյ Հաղբատու վանա հայր Սարգիս արքեպիսկոպոսը, ծանր
համարելով Թիֆլիզու առաջնորդին հպատակել, գնացել էր Գան-
ձասար և Աղուանից տան կաթուղիկոսութիւնն կտմենումէր
վարել, արդէն Խորայէլին հակառակ Գանձակում օծուած լինե-
լով՝ Եփրեմ կաթուղիկոս այս պառակտման առաջքը առնելու
համար, կառավարութեան միջոցով արգելեց նորան կաթուղիկո-
սական տիտղոս կրելը, և յատկացրեց նորան Դարաբաղու մետ-
րապօլիտ տիտղոսը, որով 1815 թուին ընդ միշտ վերջացաւ Ա-
ղուանից կաթուղիկոսութիւնը ***):

Եփրեմ բանիբուն հոգեորականներ ոլատրաստելու համար ան-
բաւական համարելով Սիմէօն կաթուղիկոսի մոմատան գաւթում
շինած դպրոցը, վանքի արեւելեան կողմը գտնուած սենեակների
վերայ 1813 թուին շինեց մի ընդարձակ շինութիւն դպրոցի հա-
մար. նոյն եռանդով Լազարեան Յովհաննէս և Յովակիմ Եղբարք
1815 - ին շինեցին Լազարեան կոչուած Ճեմարանը, ուր հայերէնը
և արեւելեան լեզուք առաջին տեղ էին բռնում:

Քեօլեան Արքահամի յաջորդ Պօղոս պատրիարքի հետ Եփրեմը
կարգաւորեց վերահաս ծռազատիկը և առաջքը առաւ, այն խռո-
վութեանց՝ որ ծագելու էին Յունաց հետ մանաւանդ Երուսաղէ-

(*) Պատմ. Կաթ. Էջմիած. եր. 182—184. (**) Նոյն եր. 81—82.

(***) Բաղդասար մետրապօլիտ Հասան - Զալալեանի համառօտ կենսա-
գրութիւն Փորձ. Դ. տարի № III եր. 131—164 (155).

մայ սուրբ Յարութեան տաճարում։

Էջմիածնի Սիւնհոդոսի ամենագործունեայ անդամ Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցի իւր յանդուգն ընաւորութեամբ անտանիլի էր գարձել, ուստի և էջմիածնից հեռացնելու համար Եփրեմ 1814 - ին նորան Թիֆլիզի առաջնորդ նշանակեց։ Ներսէս եպիսկոպոս ստանձնելով իւր նոր պաշտօնը՝ հետամուտ եղաւ բարեկարգել իւր թեմը եկեղեցիներում երեսփոխաններ կարգելով և եկեղեցեաց մուտքն ու ծախքը, ծնեալները, պսակեալները և նընջեցելները արձանագրելու համար ժապաւինեալ տոմարներ բաժնելով։ Ներսէս 1822 թուին վիճակային և եկեղեցական արդիւնքներով շինեց մի դպրոց, որ յետոյ իւր անուամբ Ներսիսեան դպրոց կոչուեց։

Եփրեմ գրատունը ընդարձակեց, և նորոգեց Տաճարի տանիքը՝ 1804 թուի պատերազմի ժամանակ Պարսից ձեռքը որպէս մարտկոց գործածուելով՝ տեղ տեղ փչացած էր։ Եփրեմը կտրող էր աւելի հանգիստ վարել իւր կաթուղիկոսական իշխանութիւնը, որովհետեւ մինչեւ 1826 թիւը այնպէս նշանաւոր պատերազմներ չեղան, բայց իւր առատաձեռնութեամբ և անհաշիւ տնտեսավարութեամբ Դաւթի և Դանիէլի խռովութեանց ժամանակ վանքի դատարկուած գանձարանը պարտքի ենթարկեց և պարտատէրներին ժողովարարութեամբ բաւակացնելու համար 1821 թուին հեռացաւ էջմիածնից։ այցելեց Հին - Նախիջևան և Շուշի քաղաքներին՝ և Հաղբատու վանքում ընակութիւն հաստատեց։

Եփրեմ, որ գեռ իւր կաթուղիոսութեան երկրորդ տարին 1812 թուին հրաժարական էր տուել *), Շուշի քաղաքումն եղած ժամանակ 1822 Յուլիս 20-ին իւր հետ եղած Սիւնհոդոսական ժողովոյ, և Հայոց բոլոր դասակարգերի անուամբ ևս հրաժարական տուեց, նոյն հրաժարականը կրկնեց Գիւլիստանում նոյն թուի Յուլիսի 30-ին յանուն կայսեր։

Մինչ Եփրեմ պարտքերից նեղուած կամենումէր խոյս տալ էջմիածնից, ահա 1819 և 1820 թուերին դարձեալ սկսեց յուղուել Կ. Պօլսում հայ կաթողիկների միութեան խնդիրը, և Պօլսոս պատրիարքը միութիւնը գլուխ բերելու համար՝ առանց ընդհանրական կաթուղիկոսի ու ազգի հաւանութեան յանձն առաւ բառ-

(*) Պատմ. կաթուղիկոսաց էջմ. եր. 74, (ծան. 29) և եր. 221

նալ եկեղեցուց Ս. Յովհանն Որոտնեցու և Գրիգոր ու Մովսէս Տաթևացիների յիշատակութիւնը, չընզովիւ Քաղկեդոնի ժողովը և Աւոնին. ընդունել հիւանդաց օծման իւղի գործածութիւնը, որի համար և 1820 թ. Յուլիս 12 - ին հիւանդաց օծման իւղ օրհնելով՝ բաշխեց եկեղեցիներին՝ ցանկացողներին օծելու համար:

Ազգը տհաճ էր Պօղոսի այս ինքնիշխան կարգադրութեանց համար, որ լինելով զուտ եկեղեցական գործ՝ ազգային ժողովով ամենայն Հայոց հայրապետի նախագահութեամբ պէտքէ անօրինուէր, Եփրեմ կաթուղիկոս ևս թղթով ազդեց պատրիարքին՝ նորա՝ իւր իրաւասութիւնից վեր խնդիրներին վճիռ տալու համար:

Դեռ կաթուղիկոսի թուղթը չէր ստացել Պօղոս պատրիարք միութիւնը խռովութեան փոխուեց. որովհետեւ Դոլէջեան կաթուիկ կղերի դրդմամբ մի ջերմ կաթովիկ հայ, նախանձախնդիր հայ ձեւանալով, միութեան ժողովի արձանագրութեան «Նրաւէր սիրոյ տակեալ տետրակը ձեռքին, Լուսաւորչի պատկերի տեղը պառի պատկերը կպցրած՝ փողոցէ փողոց և խանութէ խանութ շըրջելով՝ ցոյց էր տալիս պապի պատկերը և գրգռում ժողովրդին ասելով, պատրիարքը ֆռանգէ դարձել, ազգը Լուսաւորչի տեղ պապին պէտքէ պաշտի. այսուհետեւ սուրբ միւռոնով օծուելու աեղ՝ պատրիարքի օրհնած և եկեղեցիներին բաշխած ձէթով աղցանի պէս պիտի տապակուենք: Յուղուեց ժողովուրդը և Օգոստոսի 8 - ին գրոհ տուեց դէպի պատրիարքարան. իսկ պատրիարքը կատաղի բազմութեան ձեռքից ազատուելու համար փախաւ և թոք կացաւ մի թուրքի տան մէջ:

Տաճկաց արքունիքը հետամուա եղաւ կալոնաւորել խռովութեան պարագլուխներին, և Սախայեան Գրիգոր ամիրային, որ բոլոր յանցանքը իւր վերայ առաւ միւսներին ազատելու համար, Վերացման Խաչի եօթներորդ օրը, Սեպտմ. 18-ին կիւրակէմուի երեկոյեան ժամերգութեան «Նոյս զուարթ» ի ժամանակ Մայր եկեղեցու դրան տռաջ գլխաւոեց. կոխաղանի գատապարտուեցին և չորս անձինք՝ որոնք բանառում խոստովանել էին թէ խռովայոյզներից էին. սոքա ևս զանտգան տեղերում կախուեցին, իսկ միութեան գործին մասնակից և ջատագով նշանաւոր ամիրայք, ընդ որս և փողերանոցի տեսուչ Յարսւթիւն Պէզճեան աքսորուեցին իւրաքանչիւրը մի մի կղզի:

Պատրիարքարանը մնը որոշեց միութեամբն հայ եկեղեցին մասն

վարդապետներից, որոնք բոլորն էլ Աքրայեան ուխտից էին, մի քանիսը Էջմիածին, մի քանիսը Երուսաղէմ և մի քանիսը Մշու Առրը Կարապետի վանքը ուղարկել, բայց նոքա բոլորն էլ գիմելով Լատին եպիսկոպոսին՝ առաջիսարաւթեամբ նորա ներմանն արժանացան և նորից կաթոլիկ հեղեղեցուն միացան։ Նոցա հետեւեցին և միացած աշխարհական անձինքը և միութեան խնդիրը այսքան արիւնահեղ և իւռովայոյզ դէպքերից յետոյ վերջացաւ Պօղոս պատրիարքի անկմամբ 1823 Հոկտեմբերի 27-ին։ որին յաջորդեց Կարապետ եպիսկոպոս։ Միութեան համար եղած ժողովներին մասնակցումէր և Առոյ Կիրակոս կաթուղիկոսը, որին Մարտաշի (Գերմանիկ) փաշան ամբաստանել էր որպէս ապստամբ և տէրութեան դէմ մաքառելու համար ամրոցներ շինող։ Կիրակոս արդարանալուց յետոյ՝ վերագարձած լինելով Կիլիկիա՝ աեղլոյն այլազգի իշխանից թունաւորուելով վախճանուեց 1822 թ. 20 տմեայ իշխանութիւնից յետոյ, որին յաջորդեց Խոր Եղբօրորդին Եփրեմ-օքեպիսկոպոս 18 տարեկան հասակում։

Տաճկահայք միութեան խնդրի անյաջող ելքից յետոյ աքսորեալների վերագարձովն էին զբաղուած, իսկ Էջմիածնի մոյր Աթոռը իւր գահակալի բացակայութեամբ անորոշ զրութեան մէջ պարտքի տակ էր ընկճուած՝ երբ 1826 Յուլիս ամսին Երևանսայ Հիւսէին - իսան - Վարդարի Եղբայր Հասան - իսանը վրդովեց խաղաղութիւնը ասպատակաբռելով Ռուսաց իշխանութեան տակ եղած Նիրակայ, Երցախի, և Շամախւոյ գաւառներում։ Ասպատակութիւնը տեղի տուեց սպատերազմի և պատերազմն սկսուեց Գանձակայ շրջակայքում։ Ռուսները թէւ սակաւաթիւ՝ բայց հմաւո կաւավարութեամբ հայկակն իշխան Մատաթեանի՝ միշտ յաղթող հանգիսացան ընդդէմ Պարսից, որոնց առաջնորդումէին Աքաս - Միրզայի անդրանիկ Մահմէտ - Միրզայ և ապա ինքն Աքաս - Միրզայ։ Այս ճակատամարտներից յետոյ Պասկեւիչ զօրտպեալը, որ ուղարկուած էր Մատաթեանին օգնութեան՝ նուաճեց Նոխիջեանու գուառը և գրաւեց Աստապատ ու Նախիջեան ամրոցները։

Զմեռնային զինագույիր յետոյ 1827 թուին գարնանը նորից սկսուեց պատերազմը Արարատեան գաշտում։ Ներսէս Նիրկայ գտնուելով Սարդարապատու, Էջմիածնի և Նրեանսայ աւմանը՝ ահղեկազրումէր Եփրեմ կաթուղիկոսին որ յընթացս երկամեայ պատերազմին Հաղպատից Թիֆլիս է փոխադրուել անվտանգ մնալու

Համար՝ 1827 Հոկտեմբերի 2 -ին Երեսնի առմամբ Արարատիան
նահանգը և Էջմիածնի Հայրապետական Աթոռը լրիդ միշտ մնաց
Ռուսաց իշխանութեան տակ : Զանազան ժամանակներում գալէ
թուկանութեանց և գերեվարութեանց պատճառով համարեա ա-
նապատացած Արարատեան աշխարհը նորից շինցինելու համար ներ-
սէս քարողիներ ուղարկեց Պարսից այն նորանուան գաւառները՝
որոնք ըստ գաշնաղրութեան՝ գարձեալ Պարսից պիտի մնային
յորդորելով՝ որ գաղթեն գէպի Արարատ և Եւ այսպէս Ներ և Զա-
րեանդ (Խոյ և Սալմաս) գաւառների հայերը գաղթելով՝ ընա-
կուեցին Նախիջևանի գաւառում և Նարարի գոտում՝ Դարտ-
լազեաղի ջրաւէտ լեռնաղացտակում, Գառնի և Զանգի բաստ-
րում և Էջմիածնի մօտերքը՝ Ջրաշատ տեղերում՝ Տառի

1827 Մայիս 27-ին Կովկասեան զինուորական նահանգապետ
Սեպեաղին յայտնել էր Թագաւոր կոյսեր հաճութիւնը նորա-
նուած երկիրը ասպատակաւորներից պաշտպանելու համար Հայ-
կական մի վաչտ կազմել *). և Ներսէս ոյս վաշտի կազմելով ն
ունորա կրթութեամբն էր զբազուած երբ Թուաց կառավարու-
թեան որոշմամբ Բեսարաբիա փոխադրուեց առաջնորդութեան
պատճառով ։ Տասնական առաջնորդութեան առաջնորդութեան

Եփրեմ կաթուղիկոս իւր ծերութեան օրերը անդորրութեամբ
անցնելու համար 1828 Յուլիսի 15 -ին Թիֆլիզից Էջմիածին
վերադարձաւ և նոյն թուի Հոկտեմբեր 18 -ին Սրարատեան աշ-
խարհի և Էջմիածնի ազատութեան համար սրտապին գոհութիւն
մատուցանելով Նիկողայոս կայսեր՝ խնդրեց ծերութեան պատճա-
ռով իրան Հրաժարեալ համարել և թոյլ տալ որ Աերուէսին՝ իւր
անգը ամենայն Հայոց հայրապետ օծէ ։ Նիկողայոս կայսրը 1829
Մարտ 12 -ին հրաժարակով յայտնումէ իւր գոհունակութիւ-
նը գէպի Եփրեմ և առաջադրումէ շարանակել իւր հայրապե-
տական իշխանութիւնը, գեռ նոր տղանու ած երկիրը նոր հայ-
րապետի ընտրութեան պատճառով իրարանցումի մէջ քչգելու
համար **).

Եփուհմ կաթողիկոս 1830 Հոկտեմբերի 8-ին Ս. Եղիշևձնի Ախոն-
Հոգոսի անուամբ առեց իւր վերջին Հրաժարականը պատճառե-
լով իւր անկարազու թիւնը կատարել Հայրապետական իշերանու-

(*) *Journal. Journal of Linguistics*, 192-197. (**)*ibid.* 204-211.

թիւնը և այդ կոչման յատկացեալ եկեղեցական պաշտամունքը առ զառամելութեան։ Սիւնհոդոսը հայրապետի հրաժարականը մասսայց ի գիտութիւն Նիկողայոս կայսեր, որ Կովկասեան կողմանցո կառավարից Կոմս Պասկեիցի միջոցաւ սուսպելով հայրապետի անկարողութիւնը զառամելութեան պաշտամունքը կատարելու միայն Սիւնհոդոսով կատարուած ընտրութիւնը անբաւական համարելով տռաջադրեց Հայաստանեայց եկեղեցւոյ հնագոյն և նախնի կոնոնների համեմատ հոգեորականներից և աշխարհականներից ժողով կազմել և երկու հայրապետացու ընտրել։ Այս առաջադրութեան համեմատ 1831 Մարտ 6ին Եփրեմ կաթուղիկոսի նախագահութեամբ Ս. Էջմիածնում գումարուած ժողովը կաթուղիկոսացու ընտրեց կաթուղիկոսական տեղակալ Մարտիրոս և Թիֆլիզի առաջնորդ նախակուած էջմիածնի աւագ լուսարար Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսներին։ Այս ընտրութեան համեմատ առաւելութեան ձայնից՝ Յովհաննէս արքեպիսկոպոս 1831 Յուլիս 30ին հրովարտակով հաստատուեց կաթուղիկոս, պայմանաւ՝ որ կարեւոր դէպքում Եփրեմի խորհրդին դիմէ։

Յովհաննէս Սեպտեմբերի 6ին Թիֆլիզից դուրս եկաւ և էջմիածին ժամանելով՝ Նոյեմբերի 8ին Հրեշտակապետաց տօնի օրը կաթուղիկոսական օծումն ընդունեց։ Իսկ Եփրեմ այնուհետեւ չորս տարի ևս ասպրելով 1835 Յուլիս 16ին վախճանուեց ու թաղուեց իւր ցանկութեան համեմատ միաբանութեան գերեզմանոցում^(*)։

Առու—Պարսկական պատերազմի շարունակվումեր Արարատեան դաշտում, երբ Յարութիւն Պէղճեան միամեայ աքսորից յետոց վերագարձոծ, իւրազգեցիկ դիրքով խռովութիւնը Հայ և Հայ կաթուղիկառարակութեան միջից, բոլորովին գագարացնելու համար Կարսապետ պատրիարքի հաճութեամբ 1827-ին կաթուղիկ նշանաւոր անձանց հետ խորհուրդ անելով՝ առաջարկեց նոցա որ համաձայնին կաթուղիկ վարդապետներից մէկին կարգել պատրիարքի փոխանորդ, և այդ փոխանորդը կաթուղիկ հասարակութեան և պատրիարքարանի մէջ միջնորդ լինի։ Կաթուղիկ մեծատունք սիրով ընդունեցին Պէղճեանի առաջարկութիւնը, և ինպրեցին որնա ցոյց տայ թէ ով կը լինի յարմար այդ կոչման, Պէղճեանը Առքինան Ան-

(*) Մ. Պ., Մաւրատեան Նվարեմբ մահը սխալմամբ 1831 ին է զնում։

տօն վարդապետի անունը առաջարկեց, որ և սիրով ընդունեցին. բայց Գաղատացի մոլեռանդները Նուրիճան Անտօն վարդապետին հայութեան հակեալ համարելով պնդումէին Մարտշ Պօղոս վարդապետին փոխանորդ կարգել, և բացի սորանից Գոլեմեանց դըրդմամբ սկսեցին բոլորովին անկախ պատրիարքութեան ձգտել. այս նպատակը յառաջ տանիլու համար զիմեցին Բարձրագոյն Դրան և պատճառելով Ռուս - Պարսկական պատերազմի ժամանակ Հայոց յայտնի ռուսասիրութիւնը, յայտնեցին որ Հայք ինչպէս իրանց անսահման ռուսասիրութեամբ պատճառ եղան Պարսից տէրութեան մի քանի նահանգների Ռուսաց իշխանութեան տակ ընկնելուն՝ նոյն ցանկութիւնն ունին և Յսմանեան պետութեան վերաբերմամբ, և որպէս զի դաւադրութեան յայտնուելու ժամանակ իրանք ևս որպէս հայ չը դատապարտուեն, ինդրեցին ճանաշուել առանձին համայնք առանձին ազգապետով։

Պօղոս հրաժարեալ և Կարապետ պատրիարքը Բարձրագոյն Դրան առաջ երաշխաւորեցին Հայադաւան Հայոց հաւատարմութեան համար, կասկած յայտնելով կաթոլիկների մասին՝ որոնք եւրոպացւոց հետ հաւատակցութեամբն կարող էին նոցաշահերին ծառայել։ Կաւավարութիւնը, որ այդ ժամանակ Յունատանի անկախութեան պատերազմների պատճառով վաս յարաբերութեանց մէջ էր Եւրոպացւոց հետ, կաթոլիկ Հայերին Հայոց պատրիարքարանի միջոցաւ կ. Պօլոից աքսորից Փոքր - Ասիա։

Աքսորեալները Գաղղիացւոց և Անգլիայւոց գեապանների միջնորդութեամբ նորից վերադարձան կ. Պօլիս, և այդ գեապանների միջնորդութեամբ ու ջանքով առանձին համայք ճանաչուելու, և առանձին պատրիարք ունենալու արտօնութիւն ստացան։ Կաթոլիկ Հայերը պատրիարքի ընտրութեան պատճառով երկու կուսակցութեանց բաժանուեցին. բանագէտները կամենաւ մէին պատրիարք ընտրել Նուրիջան Անտօն վարդապետին, որի վերայ մատնանիշ էր եղած նաև Պէղճեան, իսկ ամբոխը մանաւանգ Գաղատացիք Գոլեմեանց դրդմամբ Անտօնին Հայոց հակամէտ համարելով՝ կամենաւ մէին Մարտշ կոչուած Պօղոս վարդապետին պատրիարք կարգել։ Պապը որոշեց Անտօնին պատրիարք կարգել, ուսաի և Հրաւիրելով Հռովմ եպիսկոպոս Ճեռնազրեց։

Տաճկաց կառավարութիւնը նկատելով որ Անտօն տաճկահպատակ չէ, Մանուէլիան Յոկովը վարդապետին նշանակեց ազգա-

պետ կամ պատրիարք, որ սկսեց իւր իշխանութիւնը վարել 1831 Մայիսից. իսկ Անտօն իբրև Եպիսկոպոս ստանձնեց կրօնական մասին վտրչութիւնը, այսպէս Յակավը վտրդապեար քաղաքական՝ իսկ Անտօն Եպիսկոպոսը կրօնական մասին պատրիարք դարձան։ Անտօն Եպիսկոպոս կարգագրեց Հայոստանեայց եկեղեցւոյ տրարողութեամբ և ծէսով կատարել եկեղեցական պաշտամունքը և որպէս զի Գոլեմեծեանք և Գաղատացիք ընդդիմութիւն և հակառակութիւն չանեն՝ Անտօն իւր այս կարգագրութիւնը հաստատել տուեց պապի կոնդակով։ իսկ պապը օրինադրումէր եկեղեցւոյ ժամակարգութիւնը ըստ սմենայնի հայկական եկեղեցւոյ ծէսով և արարողութեամբ կատարել, միայն Ծնունդը և Աւետումն Կատինաց հետ տօնել։ ջրախառն գինւով պատարագել և «Սուրբ Աստուած» ը առանց «իսչեցար» ի ասել։

Տաճկաց կառավարութիւն Պօղոս և Կարապետ պատրիարքների երաշխաւորութեան հակառակ 1828թուի Ռուս - Տաճկական պատերազմի ժամանակ և յետոյ աեսաւ որ Հայք, մանաւանդ հոգեորականները համակիր են դէպի Ռուսները, և ոչ սյուչափ միայն, այլ և 1831թաւին Էրզրումի և շրջակայից Հայերը Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ գաղթելով Ռուսաց սահմանը՝ ընակութիւն հաստատեցին Ախալցխայի և Զաւիէթի գաւառում ընտրելով իրանց համար հին Հայոստանի Տայոց նահանգի լեռնագաւառները և սիզաւէտ ու կանաչուտ դաշտերը՝ արգաւանդ սև վարելահողերով։ Կարսի և շրջակայից հայերը Զախարեան (Խաժակնեան) Ստեփան Եպիսկոպոսի առաջնորդութեամբ գաղթեցին արևելեան-Շիրակ (Ալէքսանդրոպոլ և գաւաթեցին Աղարանու լեռնագաւառը, Դարաչիչագու (Ծաղկաձոր) հովիտը և Գեօգչայի լեռնագաւառը (Գեղարքունիք Ախոնեաց)։

Տաճկաց կառավարութիւնը տեսնելով որ այս գաղթականութեանց զլիսաւոր պատճառը հայ հոգեօրականը և Էջմիածնի կաթողիկոսն են, արգելեց Էջմիածնի կաթողիկոսի անուան յիշտակութիւնը եկեղեցիներում, և Էջմիածնի նուիրակների Տաճկաց սահման մտնելը, որով Տաճկահայոց յարաբերութիւնը ըստ մասին Էջմիածնի հետ խզուեց։ Այս գրութեան մեծապէս նպաստեցին իրանք - կ. Պօլսոյ Հայք, պատճառելով Եփրեմի և նորանից յետոյ Յովհաննէս թ. Կարքեցու առանց իրանց հաւանութեան

ընարսւթիւնց և Ափունհոգոսը՝ որ տաճկածայոց համար գոյթակ-
ղութեան քար էր դարձել, իրբւ Հայաստանեայց Եկեղեցւոյ հո-
գուասպետի իրաւունքները սահմանափակող մի հաստատութիւն:

(Եարաւանակելի)

Յ. Վ. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի՞նչ է ԲԱՆԱՏԸ:

Քրիստոս Ճշմարտութիւն է ուսուցանում, և եթէ Ճշմարտութիւնը վերա-
ցական Ճշմարտութիւն է՝ նա իրականութեան մէջ էլ Ճշմարտութիւն կլինի,
եթէ կեանքը աստուածութեան մէջ միայն Ճշմարիտ կեանք է, ինքն ըստ
ինքեան երանելի, նա Ճշմարիտ է՝ երանելի է և այստեղ՝ երկրի վերայ
կեանքի կարելի դիպուածներում:

Քրիստոս լաւից գեղի վատը չի հրապարում, այլ հակառակը՝ վատից
դէպի լաւը: Նա խղճումէ մարդկանց վերայ որոնք շուարած՝ կորուստի և ն-
թարկուած և առանց հովուի՝ ոչիարներ և ներկայացնում ուստի և խոս-
տանումէ նոցա հովիւ և լաւ արօտստեղիւ նաև ասումէ թէ իւր աշակերտ-
ները պէտք է հալածուին իւր վարդապետութեան համար և պէտք է համ-
բերեն և անյողդողդ տանեն աշխարհիս հալածանքներին: Բայց Քրիստոս
չի ասում թէ՝ հետեւլով իւր վտրդապետութիւնը՝ նոքա աւելի կարօտու-
թիւն կը քաշեն քան հետեւլով աշխարհիս վարդապետութեանը: Նա ասու-
մէ թէ նոքա որոնք կը հետեւեն աշխարհիս վարդապետութեանը՝ դժբաղդ
կը լինին իսկ որոնք կը հետեւեն իւր վարդապետութեանը՝ երանելի գործականու-
թիւնից աւելի բաղդաւոր կը լինին:

Քրիստոս սկսելով իւր վարդապետութիւնը՝ ասումէ մարդկանց թէ՝ կա-
տարելով իւր վարդապետութիւնը՝ նաև չկատարողների մէջ՝ նոքա դորանով
առաջուանից աւելի դժբաղդ չեն լինիւ այլ՝ ընդհակառակը՝ չըկատարող
ներից աւելի բաղդաւոր կը լինին:

Քրիստոս՝ Աիրաւի՝ յեցումէ թէ նոքա, որոնք կը լսեն իրան կը հալա-
ծուեն նոցանից՝ որոնք չեն լսի իրան, բայց նա չի ասում թէ աշակերտ-
ները դորանից կորուստ կունենան:

Թէ Քրիստոս ասումէ և մտածումէ այս օրուա մէջ չի կարող տարակու-
սանք լինել, այս ակնյայտնի է և նորա պարզ բառերից այս հարցի մասին,
և նորա վարդապետութեան իմաստից, և նորանից՝ ինչպէս ապրումէին իւր
աշակերտները:

Քննելով վերացականապէս այն հարցը՝ թէ որ վիճակը լաւ կը լինի, Քրիս-
տոսի աշակերտներինը՝ թէ աշխարհի աշակերտներինը՝ չի կարելի չըտես-
նել, որ Քրիստոսի աշակերտների վիճակը պէտք է լաւ մնի, արդեն նորա